ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31.03.2014
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի և նախապաշտպանության անցկացման վերաբերյալ հաշվետվություն:
   /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:
   /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ զեկուցողը նշեց, որ ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2013-2014 ուստարվա սեպտեմբերից: Անհատական ծանրաբեռնվածությամբ նախատեսված, ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաներ: Ամբիոնային նիստերում քննարկվել են թեմաները, կատարվել են ուղղումներ, շտկումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախասիրությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ:

Զեկուցողը նշեց նաև, որ սթ. ապրիլ ամսին նախատեսվում է անցկացնել հինգ մասնագիտությունների գծով ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Նշվեց, որ պատրաստ է նախապաշտպանության ժամանակացույցը.

Պատմություն- 14.04.14թ.

Հայոց լեզու և գրակ.- 11.04.14թ

Մանկ. և հոգեբան.- 15.04.14թ.

Անգլերեն լեզու և գրակ.- 12.04.14թ.

Ֆրանսերեն լեզու և գրակ.- 11.04.14թ.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանը, Մ.գ.թ., դոց. Վ. Բրուտյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար և սահմանված ժամկետում անցկացնել ավարտական աշխատանքների նախապաշտպանություն բոլոր մասնագիտությունների գծով:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ ընթացիկ քննությունները անցկացվեցին սահմանված ժամանակացույցով: Քննությունների հարցերը կազմված էին թեստային առաջադրանքների ձևով: Պետք է արձանագրել, որ արդյունքները միջինից բարձր էին: Դա կարելի է բացատրել մի քանի հանգամանքով. նախ՝ ուսանողների մեծ մասը սկսել է լուրջ ուշադրություն հատկացնել ընթացիկ քննությունների նախապատրաստմանը, երկրորդ՝ դասախոսների մի մասը /ոչ մեծ/ դեռևս չի տիրապետում պրոֆեսիոնալ մակարդակով թեստային առաջադրանքներ կազմելու հմտություններին և երբեմն դրանք կազմված են լինում չափից ավելի հեշտ, երրորդ՝ ընթացիկ քննությունների թեստերը կազմված են լինում վեց շաբաթվա ծրագրային նյութի հիման վրա, ինչից ենթադրվում է, որ ուսանողը սովորելու մեծ ծավալի նյութ չունի, չորրորդ՝ թեստային առաջադրանքների պայմաններում շարունակում է գործել պատահականության գործոնը, պատահական նշումներ կատարելով ուսանողը երբեմն ստանում է բարձր միավոր: Զեկուցողն ասաց, որ առաջին ընթացիկ քննություններից հետո ֆակուլտետում արձանագրվել է հետևյալ պատկերը.

Պատմություն մասնագիտության 1-ին կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 18 ուսանող, 4 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 81.8%,

Պատմություն մասնագիտության 2-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 17 ուսանող, 6 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 73.9%,

Պատմություն մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 19 ուսանող, 15 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 55.9%,

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 4 ուսանող, 15 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 21.1%,

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 20 ուսանող, 5 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 80%,

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 16 ուսանող, 3 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 84.2%,

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 1-ին կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 12 ուսանող, 4 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 75%,

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են 9 ուսանող, պարտքեր ունեցող ուսանողներ չկան, առաջադիմությունը կազմել է 100%,

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են 9 ուսանող, պարտքեր ունեցող ուսանողներ չկան, առաջադիմությունը կազմել է 100%,

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 21 ուսանող, 8 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 72.4%,

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 21 ուսանող, 7 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 75%,

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 24 ուսանող, 4 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 85.7%,

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 7 ուսանող, 3 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 70%,

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 8 ուսանող, 2 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 80%,

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից դրական միավորներ ստացել են ընդամենը 8 ուսանող, 4 ուսանող ունեն պարտքեր, առաջադիմությունը կազմել է 66.7%:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանը, Մ.գ.թ., դոց. Վ. Բրուտյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Վ. Ալեքսանյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Ս. Խաչատրյան